ՔԱՐԵԴԱՐՅԱՆ ԿԱՅԱՆՆԵՐ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Բ. Գ. ԵՐԻՑՅԱՆ

1963 թ. ամռանը, Հայաստանում երկրաբանական հետազոտությունների ժամանակ, Վ. Պ. Լյուբինը և Լ. Ա. Բարսեղյանը Նոյեմբերյանի շրջանում, Գիլիկ սարի վրա, հայտնաբերել են քարե դարին վերաբերող հնագիտական նյութեր. 1967 թ. մենք հետաղոտել ենք այդ շրջանը և հայտնաբերել ևս մի նոր պալեոլիթյան կայան՝ «Հացուտ» կոչվող հանդամասում։ Հաջորդ տարում ԳԱ հնագիտական միացյալ արշավախումբը (ղեկավար՝ պրոֆ. Հ. Ա. Մարտիրոսյան) հետաղոտել է այդ շրջանը, գլխավորապես նպատակ ունենալով հայտնաբերել քարայր-կացարաններ[2]։ Կատարվել են նաև հայտնի կայանների կրկնակի հետազոտում, որի շնորհիվ այդ կայանների նյութերը հարստացվել են հնագիտական նոր նմուշներով[3]։

Նշված շրջանում պալեոլիթյան կայանների հայտնաբերումը (մինչ այդ հայտնի էին պատահականորեն գտնված առանձին գործիքներ) արժանի է բացառիկ ուշադրության, քանի որ դրանք լրացնում են Հայաստանի քարեդարյան մշակույթի զարգացման տարբեր փուլերը և միաժամանակ կապող օղակ են Հայաստանի և Անդրկովկասի քարեդարյան մշակույթների միջև։ Այս հոդվածի նպատակն է տալ Նոյեմբերյանի շրջանի երկու նոր (Գիլիկ, Հացուտ) պալեոլիթյան կայանների նյութերի նախնական ուսումնասիրությունների արդյունքները։

Գիլիկի մուստերյան կայանը գտնվում է Նոյեմբերյանի շրջկենտրոնից 8 կմ դեպի հյուսիս, Անդրկովկասի երեք հանրապետությունների սահմանամերձ կետում, զբաղեցնում է Գուգարաց լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան վերջավորությունը և ունի յուրյան շրջանի հրաբխային ու հրաբխանստվածքային ծագում։ Վերջինս համընկնում է Քաշալ-սարի անտիկլինորիայի հետ, որին հատուկ է համեմատաբար ֆիզիկական թույլ հողմնահարում ու հարթ, մակերևսային դենուդացիա։

Ընդհանրապես Հայաստանի քարեդարյան կայանների ու կայան-արհեստանոցների տեղանքի սկզբնական վիճակը, դենուդացիայի և ակումուլացիայի հետևանքով, որպես կանոն, խախտված է։ Այս առումով այլ է Գիլիկի կայանի տեղանքը։ Այստեղ հայտնաբերված նյութերի համեմատաբար ոչ մեծ տարածումը, գրեթե աննկատ լվացումն ու հողմնահարումը բացատրվում է նստվածքների ու նրանց հետ կապված գործիքների սկզբնական վիճակի աննշան խախտումով։

Քարեդարյան կայանը գտնվում է սարի հյուսիսային հարթ լանջին և զբաղեցնում է 400 քմ տարածություն։ Հակառակ Հայաստանի մյուս բոլոր հայտնի կայանների, որտեղ գործիքները պատրաստվել են բացառապես օբսիդիանից, երբեմն բազալտից, այստեղ այդ նպատակի համար օգտագործվել է միայն կայծքարը, որով Գիլիկի պալեոլիթյան հավաքածուն առաջինն է Հայաստանում։

Օգտագործված կայծքարը տեղական է և ունի կրաքարային ծագում։ Նրա որակի ու գույների բազմազանությունը, խոշոր, չօգտագործված կտորների, նախնական ցլեփների ու թափոնի բացակայությունը, վկայում է այն մասին, որ քարեդարյան մարդը կայծքարը վերցրել է հումքի տարբեր աղբյուրներից։ Դրանցից ամենամոտը գտնվում է կայանից 0,5 կմ հարավ-արևմուտք։

Գործիքները համեմատաբար մեծ չեն, ամենախոշորը (աղ. II, 2) ունի 10 սմ երկարություն, մոխրագույն, բաց մոխրագույն է՝ վարդագույն երանգներով։ Ընդամենը, Գիլիկի կայանում, հավաքվել է 110 առարկա։ Այստեղ հանդիպում են պատրաստի գործիքներ, միջուկներ, շերքեր,

---

1 Այդ նյութերի հավաքածուն Վ. Պ. Լյուբինը և Լ. Ա. Բարսեղյանը սիրով տրամադրել են հեղինակին՝ ուսումնասիրելու համար։ Առիթից օգտվելով խորին շնորհակալություն եմ հայտնում նրանց։

2 Հայտնաբերվել են քարայրներ, որոնք հնագիտական առումով հետաքրքրություն են ներկայացնում։

3 Բոլոր դաշտային աշխատանքներին ակտիվորեն մասնակցել և օգնել է շրջանի հնագետ Ս. Ս. Ջիլինդարյանը։



Աղ. 1. 1—սրածայր, 2—կողային ծակիչ, 3, 5—ցլեփներ, 4—չեղբ, 6—ցլեփ՝ դարձված միջուկ, 7, 8, 9, 10—միջուկներ։

ՔԱՐԵԴԱՐՅԱՆ ԿԱՅԱՆՆԵՐ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Բ. Գ. ԵՐԻՑՅԱՆ

1963 թ. ամռանը, Հայաստանում երկրաբանական հետազոտությունների ժամանակ, Վ. Պ. Լյուբինը և Լ. Ա. Բարսեղյանը Նոյեմբերյանի շրջանում, Գիլիկ սարի վրա, հայտնաբերել են քարե դարին վերաբերող հնագիտական նյութեր. 1967 թ. մենք հետազոտել ենք այդ շրջանը և հայտնաբերել ևս մի նոր պալեոլիթյան կայան՝ «Հացուտ» կոչվող հանդամասում։ Հաջորդ տարում ԳԱ հնագիտական միացյալ արշավախումբը (ղեկավար՝ պրոֆ. Հ. Ա. Մարտիրոսյան) հետազոտել է այդ շրջանը, գլխավորապես նպատակ ունենալով հայտնաբերել քարայր-կացարաններ[2]։ Կատարվել են նաև հայտնի կայանների կրկնակի հետազոտում, որի շնորհիվ այդ կայանների նյութերը հարստացվել են հնագիտական նոր նմուշներով[3]։

Նշված շրջանում պալեոլիթյան կայանների հայտնաբերումը (մինչ այդ հայտնի էին պատահականորեն գտնված առանձին գործիքներ) արժանի է բացառիկ ուշադրության, քանի որ դրանք լրացնում են Հայաստանի քարեդարյան մշակույթի զարգացման տարբեր փուլերը և միաժամանակ կապող օղակ են Հայաստանի և Անդրկովկասի քարեդարյան մշակույթների միջև։ Այս հոդվածի նպատակն է տալ Նոյեմբերյանի շրջանի երկու նոր (Գիլիկ, Հացուտ) պալեոլիթյան կայանների նյութերի նախնական ուսումնասիրությունների արդյունքները։

Գիլիկի մուստերյան կայանը գտնվում է Նոյեմբերյանի շրջկենտրոնից 8 կմ դեպի հյուսիս, Անդրկովկասի երեք հանրապետությունների սահմանամերձ կետում, զբաղեցնում է Գուգարաց լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան վերջավորությունը և ունի յուրյան շրջանի հրաբխային ու հրաբխանստվածքային ծագում։ Վերջինս համընկնում է Քաշալ-սարի անտիկլինորիայի հետ, որին հատուկ է համեմատաբար ֆիզիկական թույլ հողմնահարում ու հարթ, մակերևսային դենուդացիա։

Ընդհանրապես Հայաստանի քարեդարյան կայանների ու կայան-արհեստանոցների տեղանքի սկզբնական վիճակը, դենուդացիայի և ակումուլացիայի հետևանքով, որպես կանոն, խախտված է։ Այս առումով այլ է Գիլիկի կայանի տեղանքը։ Այստեղ հայտնաբերված նյութերի համեմատաբար ոչ մեծ տարածումը, գրեթե աննկատ լվացումն ու հողմնահարումը բացատրվում է նստվածքների ու նրանց հետ կապված գործիքների սկզբնական վիճակի աննշան խախտմամբ։

Քարեդարյան կայանը գտնվում է սարի հյուսիսային հարթ լանջին և զբաղեցնում է 400 քմ տարածություն։ Հակառակ Հայաստանի մյուս բոլոր հայտնի կայանների, որտեղ գործիքները պատրաստվել են բացառապես օբսիդիանից, երբեմն բազալտից, այստեղ այդ նպատակի համար օգտագործվել է միայն կայծքարը, որով Գիլիկի պալեոլիթյան հավաքածուն առաջինն է Հայաստանում։

Օգտագործված կայծքարը տեղական է և ունի կրաքարային ծագում։ Նրա որակի ու գույների բազմազանությունը, խոշոր, չօգտագործված կտորների, նախնական ցլեփների ու թափոնի բացակայությունը, վկայում է այն մասին, որ քարեդարյան մարդը կայծքարը վերցրել է հումքի տարբեր աղբյուրներից։ Դրանցից ամենամոտը գտնվում է կայանից 0,5 կմ հարավ-արևմուտք։

Գործիքները համեմատաբար մեծ չեն, ամենախոշորը (աղ. II, 2) ունի 10 սմ երկարություն, մոխրագույն, բաց մոխրագույն է՝ վարդագույն երանգներով։ Ընդամենը, Գիլիկի կայանում, հավաքվել է 110 առարկա։ Այստեղ հանդիպում են պատրաստի գործիքներ, միջուկներ, չեղբեր,

---

1 Այդ նյութերի հավաքածուն Վ. Պ. Լյուբինը և Լ. Ա. Բարսեղյանը սիրով տրամադրել են հեղինակին՝ ուսումնասիրելու համար։ Առիթից օգտվելով խորին շնորհակալություն եմ հայտնում նրանց։

2 Հայտնաբերվել են քարայրներ, որոնք հնագիտական առումով հետաքրքրություն են ներկայացնում։

3 Բոլոր դաշտային աշխատանքներին ակտիվորեն մասնակցել և օգնել է շրջանի հնագետ Ս. Ս. Ջիլինգարյանը։



Աղ. 1. 1—սրածայր, 2—կողային ծակիչ, 3, 5—ցլեփներ, 4—չեղր, 6—ցլեփ՝ դարձված միջուկ, 7, 8, 9, 10—միջուկներ։



Աղ. II. 1—լրիվ օգտագործված միջուկ, 2, 4—խոշոր ցլեփներ, 3, 3a—բերիշներ, 6, 7—օգտագործված ցլեփներ, 5, 8—միջուկներ։

ցլեփներ, փոքր քանակությամբ մանր աշելներ և ատամնավոր եզրերով հատուկ գործիքներ։

Միջուկները ընդամենը 10-ն են։ Երկու միջուկ կարելի է դասել պրիզմայաձևերի խմբին (աղ. I, 8, 10)։ Նրանց հարվածի հրապարակը, ի տարբերություն լևալլուայան միջուկների, հարթ է և ձևավորված է մեկ ցլեփի հանումով։

Բրգաձև միջուկները նույնպես երկուսն են։ Նրանցից մեկը (աղ. I, 7) ունի մշակված ելուստ՝ հարվածի հրապարակի եզրին։ Կողերը ուղղված են մի շարք ցլեփների հանումով։ Ելուստը հարդարվել և ծակող գործիքի դեր է կատարել։ Մյուսը նույնպես օգտագործվել է որպես գործիք։ Հարվածի հրապարակը ունի ատամնավոր բանող կող (աղ. I, 6)։ Միջուկներից երեքը կարելի է համարել միակողմանի, միահրապարակ միջուկների ոչ բնորոշ օրինակներ։ Նրանցից մեկը կարճ ու լայն է և ունի մշակված հարվածի հրապարակ (աղ. I, 9), մյուս երկուսը բավականաչափ օգտագործվել են և նրանց միայն աննշան մասն է մնացել (աղ. II, 1)։

Հավաքածուն պարունակում է նաև սկավառակաձև միջուկի երկու օրինակ (աղ. II, 5, 8)։ Մինչև վերջ օգտագործված միջուկների մի խումբ, որոնք ունեն մշակված կողեր և հարդարված ելուստներ, որպես գործիքներ, տարբեր կիրառում են գտել։ Ընդհանուր առմամբ միջուկները մասամբ են ենթարկվել նախնական տաշման և նրանցից հանված ցլեփները կրում են բավականին խոշոր հարվածի բլրակներ, որով որոշակի տարբերվում են վերին պալեոլիթյան նույնաձև միջուկներից։

Պետք է նշել նաև այն կարևոր հանգամանքը, որ այստեղ ծանոթ են եղել քարի մշակման լևալլուայան տեխնիկային, թեև միջուկների մեջ քիչ են խսկական լևալլուայան օրինակները։

Տաշեղների ընդհանուր թիվը հասնում է 78-ի, որոնցից 18-ը մանր, պատահական ցլեփներ ու թեփուկներ են, ստացված գործիքների պատրաստման, միջուկների ձևավորման ժամանակ։ Տաշեղների ձևերի, մեջքին պահպանած հետքերի ու հարվածի հրապարակների մանրակրկիտ դիտումները ցույց են տալիս, որ վերջիններս հանված են վերը նշված միջուկներից (աղ. I, 3, 4, 5,)։

Վաղ պալեոլիթյան նյութերի ուսումնասիրության ժամանակ կարևոր նշանակություն ունի լևալլուայան տաշեղների (այդ թվում նաև գործիքների) ու միջուկների տոկոսային հարաբերությունը այլ տիպի տաշեղների ու միջուկների նկատմամբ։ Այս նկատառումով, բոլոր տաշեղները ըստ մշակման տեխնիկայի կարելի է բաժանել երկու խմբի՝ տաշեղներ հանված նախօրոք պատրաստված միջուկից և տաշեղներ՝ չձևավորված ելունդից։

Առաջին խմբի տաշեղները (8 ցլեփ և 2 շեղբ) կարելի է համարել քարի մշակման լևալլուայան տեխնիկայի արդյունք։ Նրանցից 6-ը հանված են լևալլուայան, իսկ 2-ը՝ կոպիտ պրիզմայաձև միջուկներից։ Շեղբերը չունեն կանոնավոր ձև (աղ. I, 4). Նրանց հարվածի հրապարակը հարթ է, հակառակ ցլեփների, որոնց հրապարակը կլոր կամ երկթեք հարդարված է։ Այս խմբից միայն երեք ցլեփ է կրում կողային հարդարանք։

Երկրորդ խմբի տաշեղներն ունեն անկանոն ձև, հաստ ու կոպիտ են, որոշ մասի վրա պահպանվել է ելունդի դեռևս չհանված կեղևի մի մասը։ Դրանք մեծ մասամբ ստացվել են սկավառակաձև միջուկից կամ միջուկաձև ելունդից։ Այդ է վկայում նաև նրանց հարթ ու լայն հարվածի հրապարակները (աղ. II, 4)։ Երկրորդ, ոչ լևալլուայան մշակման խմբին պատկանող տաշեղներից 16-ը համարվում են պատրաստի գործիքներ։ Գերակշռող մասը, այս կամ այն չափով, հարդարված է կամ ունի որոշակի դրսևորվող օգտագործված կողեր (աղ. II, 2, 7, 6)։

Գործիքները գլխավորապես պատրաստվել են ցլեփներից ու շեղբերից՝ ատամնավոր հարդարանքի միջոցով. Բազմաթնույթ գործիքների մեջ հանդիպում են սրածայրեր (աղ. I, 1), կողային տիպի ծակիչներ (աղ. I, 2), քերիչներ (աղ. II, 3, 3ա), տարբեր տեսակի կտրիչներ և այլն։ Գործիքների հարդարանքը տարբեր է։ Հանդիպում են մանր, թեք, հարթ և հակադիր հարդարանքի ձևեր։

Նյութերի մեջ ձեռքի հատիչներ ու երկկողմանի մշակված գործիքներ չեն հանդիպում։

Զարդացած տիպի միջուկների առկայությունը, շեղբերի աննշան քանակությունը և ոչ լևալլուայան տիպի ցլեփների գերակշռումը վկայում են այն մասին, որ Գիլիկի կայանը պատկանում է միջին քարե դարին։ Հավաքածուն, ըստ պատրաստման տեխնիկայի ու տեսակավորման, նման է Աբխազիայի նույն շրջանի ոչ շեղբավոր հավաքածուներին (Ցաշտուխ)[4]։ Նույնանման

---

[4] Н. И. Коробков. Итоги пятилетних исследований Яштухского палеолитического местонахождения. СА, М., 1967, 4, стр. 202—204, рис. 2—3.



Աղ. III. 1, 7, 9—պրիզմայաձև միջուկներ, 2, 3, 4—շեղբեր, 5—ծակիչ, 6—ցլեպ, 8—ատամնավոր գործիք։

հումք և գործիքներ օգտագործվել են նաև աշել-մուստերյան շրջանի Կադիր-Դերե կայանում[5]։

Թեև նյութերի փոքրաթիվ լինելու պատճառով հավաքածուի թվագրումը որոշ չափով դժվարանում է, այնուամենայնիվ հիմնվելով գործիքների մշակման որոշ առանձնահատկությունների վրա կարելի է թվագրել այն մուստերյան շրջանով (լայն հասկացողությամբ)։ Միաժամանակ այս նյութերի ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրել, որ Հայաստանում գոյություն են ունեցել մուստերյան մշակույթի ղարդացման տարբեր ուղիներ։

Հացուտի վերին պալեոլիթյան կայանը գտնվում է Գիլիկի կայանից ոչ հեռու, Ղեսսիքարից 1 կմ դեպի հարավ-արևելք, Հացուտի հանդամասում։ Կայանի տեղանքը շրջապատից անջատվում է բավականին խոր ձորերով՝ լորացած գետերի հուներով։ Այս դարավանդանման հարթությունը (հարաբերական բարձրությունը 150—200 մ) ֆիզիկո-աշխարհագրական պայմաններով գրեթե չի տարբերվում Գիլիկի կայանի տեղանքից, բացառությամբ մակերեսի լվացման պրոցեսի ավելի թույլ բնույթից։

Գործիքների տարածման հրապարակը չի անցնում 100—150 թ/մ։ Տեղում 0,5 մ խորությամբ արված հետազոտական շուրջից պարզվում է, որ այստեղ գործիքները դեռևս գտնվում են շերտում[6]։ Անմիջապես հարթության վերին մասում հանդիպում են պատահական շեղբեր վերին պալեոլիթյան տեսքի և կայծքարից գործիքներ, որոնք վերաբերում են ավելի ուշ շրջանի[7]։ Քանի որ տեղանքը բազմիցս հերկվել և փորվել է, նյութերը այս կամ այն չափով խառնվել են։ Նյութերի մեջ հանդիպում են մուստերյան գործիքներ (աղ. III, 5), որոնք ընդհանուր մասսայից տարբերվում են իրենց տեսքով, մշակման տեխնիկայով և ավելի խիտ պատինի շերտով։

Հավաքվել է 170 առարկա, որոնցից 5-ը մուստերյան են, 2-ը՝ ավելի ուշ շրջանի, իսկ մնացածը՝ վերին պալեոլիթյան։

Բացի կայծքարից օգտագործվել են նաև օբսիդիան (10 օրինակ), կվարց (7 օրինակ)։ Կայծքարը նույն որակի ու գույնի է, ինչ Գիլիկի կայանում։ Հնարավոր է, որ քարեդարյան մարդիկ տարբեր ժամանակներում օգտվել են նույն հումքի աղբյուրներից։

Միջուկները և միջուկանման կտորները 18-ն են՝ մեծ մասը փոքր. ամենամեծ օրինակն ունի 7 սմ երկարություն։ Նրանց մեջ հանդիպում են լրիվ օգտագործված օրինակներ։ Միջուկներից մի քանիսը դժվարությամբ են ենթարկվում դասակարգման։ Տասնմեկ միջուկ կրում է նախնական մշակման հետքեր, 6-ը՝ պրիզմայաձև են՝ հարվածի հրապարակին մեկ կամ մի քանի մանր ցլեփների հետքերով (աղ. III, 7, 9, 1)։ Դրանցից հանված են բազմաթիվ շեղբեր։

Միջուկների մի մասը միակողմանի, միահրապարակ, բայց անկանոն ձև ունեցող կտորներ են, որոնք հարդարանքի շնորհիվ դարձել են տարբեր բնույթ կրող գործիքներ (աղ. III, 8)։ Մանր ու մեծ շեղբերն ու ցլեփները լիովին համապատասխանում են միջուկներին։

Տաշեղներից 20-ը շեղբեր են՝ հարվածի հարթ հրապարակով, բացառությամբ մի քանի օրինակի։ Շեղբերի մեծ մասը օգտագործվել է աշխատանքում և կրում է թեթևակի հարդարանք։ Դրանցից 4-ը պատրաստի գործիքներ են, ծայրային տիպի քերիչներ (աղ. III, 2, 3)։ Հանդիպում են նաև առանց հարդարանքի շեղբեր (աղ. III, 4)։

Ցլեփների մեծ մասի միջին մեծությունը 2,5.3,5 սմ է (աղ. III, 6)։ Ինչպես շեղբերը, սրանք նույնպես մեծամասնությամբ ունեն հարթ հարվածի հրապարակ։ Երբեմն հանդիպում են հաստ ու կարճ օրինակներ։ Գրեթե բոլորը ունեն վատ արտահայտված հարվածի բլրակներ։ Ցլեփների կեսից ավելին կրում է հարդարանք կամ օգտագործման հետքեր։

Գործիքներից հատկանշական են ծակիչները (աղ. III, 5), քերիչները, սրածայրերը, ատամնավոր գործիքները (աղ. III, 8)։ Կտրիչներ բոլորովին չկան։ Քերիչներից երկուսը պատրաստված են հաստ ու կոպիտ ցլեփների վրա։ Դրանց բանող կողը ստացել է ատամնավոր տեսք՝ կոպիտ ու թեք հարդարանքի շնորհիվ։

Ինչպես միջուկները, այնպես էլ ցլեփներն ու հատկապես շեղբերը, որոնք բավականին շատ են, վկայում են, որ հավաքածուն արդյունք է համեմատաբար զարգացած մշակույթի, թեև իր մեջ պարունակում է դեռևս մուստերյան շրջանի որոշ յուրահատկություններ։

---

[5] М. З. Паничкина, К вопросу о верхнем палеолите в Армении. Известия АН Арм. ССР, 1948, № 7, стр. 61, рис. 1—22.

[6] Ծառատունկի համար փորվել են փոսեր, և գործիքները բացառապես հանդիպում են այդ փոսերից դուրս հանված հողի մեջ։

[7] Հանդիպում են մեծ քանակությամբ խեցեղենի բեկորներ։

Այս տեսակետից կայանի նյութերը համապատասխանում են Ջատկրանի[8] վերին պալեոլիթյան հավաքածուին։

Նյութերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ կայանի հավաքածուն պատկանում է այն փոքրաթիվ վերին պալեոլիթյան կայանների շարքին, որ մինչև այժմ հայտնի էին Հայաստանում։

ПАЛЕОЛИТИЧЕСКИЕ МЕСТОНАХОЖДЕНИЯ В НОЕМБЕРЯНСКОМ РАЙОНЕ

Б. Г. ЕРИЦЯН

Резюме

Палеолит северной Армении, по сравнению с южной частью республики, вовсе не изучен. Между тем, эта территория, в силу своего географического положения, представляет большой интерес для понимания связей и расселения нижнепалеолитических людей на территории Армении.

В 1963 г. на стыке границ трех закавказских республик, на горе Гилик в Ноемберянском районе В. П. Любиным и Л. А. Барсегяном был собран археологический материал нижнепалеолитического облика. В 1967 г. мы исследовали этот район и обнаружили еще одно палеолитическое местонахождение (в Ацуте).

I. Мустьерское местонахождение Гилик. Материал собран на поверхности, на ограниченной площади в 400 м². Комплекс состоит из 110 кремневых предметов, ручные рубила и двусторонне обработанные орудия отсутствуют. Нуклеусы развитых форм (грубопризматические, одноплощадочные, клиновидные, дисковидные). С точки зрения техники расщепления, комплекс относится к категории нелеваллуазских слабофасетированных. Среди орудий преобладают изделия с выемчатой и зубчатой отделкой, встречаются особые острия на углу отщипов. Кремневый инвентарь горы Гилик позволяет ставить вопрос о существовании на территории Армении различных вариантов мустьерских индустрии.

II. Верхнепалеолитическое месторождение Ацут находится в 1 км к юго-востоку от горы Хеаси-Кар. Находки встречаются на небольшой площади 100×150 м. Всего собрано 170 предметов. Нуклеусов и нуклевидных предметов—18. В основном они призматические. Много правильных пластин. Ударные площадки отщипов и пластин преимущественно гладкие. В коллекции имеются острия, скребки на концах пластинок и на краях удлиненных отщипов, а также скребки на толстых массивных отщипах, оформленные крутой ретушью. Значительную группу составляют и изделия с зубчато-выемчатой ретушью. Резцы отсутствуют.

Детальный анализ материала позволяет отнести комплекс Ацута к числу верхнепалеолитических памятников Армении, хотя на нескольких предметах прослеживаются технические приемы обработки камня, характерные для предшествующей эпохи.

---

[8] С. А. Сардарян, Палеолит в Армении, Ереван, 1954, стр. 105.